



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

58, 59, 60, 61,
62, 63, 64, 65,
66, 67, 68, 69, 70,
71, 72, 73, 74, 75

2
L-85

2010



ԼՍԱՐԱՆ

032

ԿԵՆՅԱԴՊՐՈՒՑ ԳԻՏԵԼԵԱՅ.

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼՍՈՑ ԱՌՈՒՄՆ ԶՈՍՄԱՆԵԱՆՑ

ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1453.



Ի ԹԷՌՐՈՍԻԱ,

Ի Տպարանի Խաչիպեան Ուսումնարանին.

1869 = 030Ը.

28712-42

«Եթէ կրնաս ձայնդ բարձրացնել, խօսէ: Եթէ գիրք միայն Թողուն քովդ, գրէ: Փողոցին մէջ քարի մը վրայ կանգնած՝ քարոզէ, եթէ կրնաս. եթէ հրապարակական կեանքը փակ է, տանդ մէջ բան սովբեցուր: Եթէ ձայն չունիս, օրինակ տալու կարողութիւն ունիս: Այս ոչ առաքինութիւն է, ոչ կարգէ դուրս գործողութիւն. այլ պարտք է՝ պարզ ու յստակ: Աշխարհիս մէջ Աստուծոյ կողմանէ այն եղիր՝ ինչ որ է բժիշկը մարմնոյ հիւանդութեանց համար. բժիշկը պարտական է հասնելու ամենայն ցաւագարաց, եւ դու պիտի հասնիս ամենայն տգիտաց: Քու Ստեղծողդ կենացդ համարը պիտի պահանջէ քեզնէ: Յոյսդ մի՛ դներ բացասական առաքինութեան վրայ, որ միայն ուրիշի վնաս չընեն է. քեզի օրէնք տրուած է որ հասարակաց գործոյն համար աշխատիս, եղբարքդ սիրես, լուսաւորես, մխիթարես, ազատես մոլութենէ ու մոլորութենէ, եւ առ Աստուած առաջնորդես: Կեանքն ալ այս է, մարդն ալ այս»:

ԺԻՒԼ ՍԻՄՈՆ,

(Իմաստասէր եւ Բողոքազէտ գաղղիացի):



11407-57

Дозволено Цензурою. Тифлисъ, 30 Октября 1868 г.



ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼՍՈՅ ԱՌՈՒՄԸ ՅՕՄՄԱՆԵԱՆՅ.



Մշխարհիս երեսը մէկ քաղաք մը չկայ այնչտի անուանի, եւ բնական գիրքովը տէրութեան մայրաքաղաքը, որ տաճկերէն կամ ռամկօրէն կասուի Ստանպօլ, եւ մեր մէջ ու Յունաց մէջ սովորաբար Պօլիս: Այս մայրաքաղաքին զարմանալի մէկ յատկութիւնն այս է որ մինչեւ ցայժմ իրեն վրայ եղած մեծամեծ փոփոխութիւնները՝ ամէն անգամ ըլլոր Ասիոյ ու Եւրոպայի, ու նաեւ ըլլոր աշխարհիս քաղաքականութեանը կերպարանափոխ լինելուն պատճառ եղած են:

Կարծես թէ ազնիւ գոհարէ քուէ (qur) մի է այս հիւ-
նալի քաղաքը աստուածային նախախնամութեան
ձեռքը. այս քուէն քանի մը հարիւր տարին մէկ ան-
գամ նետուածին պէս՝ ահագին փոփոխութիւն մը
կպատահի ամէն տեղ: Օրինակի համար, ասկից 1500
տարիի չափ առաջ՝ երբոր Մեծն Կոստանդիանոս իւր
կայսերական աթոռը Հռոմ քաղաքէն վերուց ու Պո-
լիս փոխադրեց, արեւմտեան կայսերութիւնը տկա-
րացաւ ընկաւ, ու եւրոպան քիչ ատենէն օտար ազ-
գաց արշաւանքովը ոտնակոխ եղաւ: Յետոյ երբոր
ասկից 400 տարի առաջ Օսմանեանց ձեռքն անցաւ,
Ասիան ու եւրոպան նոր տեսակ քաղաքականութեան
ալիքներովը՝ իբրեւ ահագին ջրհեղեղով լուացուե-
ցան, եթէ այսուհետեւ ալ արեւելեան խնդրոյն լու-
ծուիլը այս մայրաքաղաքին մէկ մեծ փոփոխութեամ-
բը պատահի, տարակոյս չկայ որ այժմու ժամանա-
կիս քաղաքականութիւնը՝ թէ Ասիոյ եւ թէ եւրո-
պայի մէջ՝ ուրիշ ամէն ատեններէ աւելի կերպարա-
նափոխ պիտի լինի: Ուրեմն այս բանիս համար ալ
կարժէ գոնէ համառօտ տեղեկութիւն մը ունենալ
Կոստանդնուպօլսոյ հին պատմութեանը, մանաւանդ
Յունաց ձեռքէն Օսմանցւոց անցնելուն ինչ կերպով
եղածին:

Հին ատենը այս քաղաքիս անունն էր Բիզանդիոն,
եւ շինուած էր Քրիստոսէ 638 տարի առաջ, Մեծն
Կոստանդիանոս, գրեթէ հազար տարի ետքը, այսինքն
Քրիստոսի 550 թուականին, մեծցուց ամբողջ, նո-

րոգեց, զարգարեց, կայսերական աթոռը Հռոմէն
հոն փոխադրեց, եւ անունը դրաւ նոր Հռոմ. ուրիշ-
ները ի պատիւ շինողին ու զարգարողին՝ անուանեցին
զայն Կոստանդնուպօլիս, որ կնշանակէ Կոստանդիանոսի
քաղաք:

Բայց հռոմէական կայսերութիւնը այս կերպով
Ասիոյ ու եւրոպայի մէջտեղը փոխադրուելով՝ փոխա-
նակ մեծնալու զօրանալու հետզհետէ աւելի տկարա-
ցաւ. վասն զի ասիական զեղխութիւնը, փափկասի-
րութիւնը, արծաթսիրութիւնն ու փառասիրութիւ-
նը այնչափ ոյժ առին յունական մայրաքաղաքին մէջ
որ Հռոմայեցւոց զինուորական քաջութիւնը, հայ-
րենասիրութիւնն ու վեհանձն ազատասիրութիւնը
շուտով մոռցուեցան՝ ջնջուեցան, եւ Կոստանդնու-
պօլսոյ ու շրջակայ գաւառաց բնակիչները, որ մե-
ծաւ մասամբ Յոյն էին, միայն Հոռօնայեցի կամ Հոռոմ
անունը իրենց վրայ պարծանքի մը պէս պահեցին:

Վենետիկեցիք ու Գաղղիացիք մէկ եղած՝ 1204-ին
Հրէաստանը Արաբացւոց ձեռքէն ազատելու պատճա-
ռանօք գնացին արեւելք, եւ առանց դժուարութեան
տիրեցին Կոստանդնուպօլսոյ եւ բոլոր բիւզանդեան
կայսերութեան երկիրներուն. բայց 1261-ին Միքայէլ
Պալէոլոգ յոյն կայսրը նորէն տիրեց մայրաքաղաքին,
եւ այնուհետեւ երկու հարիւր տարի ալ նորա յա-
ջորդներուն ձեռքը մնաց այն հրաշակերտ քաղաքը:
Հրաշակերտ կասեմք՝ ոչ միայն մէջի հոյակապ շէն-
քերուն համար, այլ եւ մանաւանդ չքնաղագեղ բնա-
կան գրիցն ու բարեխառն օգոյն համար, որոց նմանը

չկայ բոլոր երկրագնտիս երեսը, այնպէս որ եւրոպացի մատենագրին մէկը իրաւամբ կասէ թէ Կոստանդնուպօլսոյ գեղեցկութիւնը գուցէ կարենայ մէկը սաստիկ սրամտութեամբ երեւակայել՝ երազի մէջ տեսածի պէս, բայց ոչ բերնով կարող է պատմել, ոչ գրչով նկարագրել, եւ ոչ վրձինով ճիշտ պատկերը քաշել:

Եւ ահա այս հիանալի մայրաքաղաքին վրայ էր նաեւ Օսմանեան ասուած թուրքերուն աչքը հարկւր տարիէ ի վեր՝ երբոր սուլթան Օսմանին աթոռը նըստաւ սուլթան Մէհմէմէտ Փաթիհ, խրօխտ՝ վառասէր՝ անվախ եւ անգութ թագաւորը 1451-ին:

Սա առջի բերանը Յունաց կայսեր բարեկամ կը ձեւանար, բայց տարին չանցած՝ հրաման հանեց որ հազարաւոր զործաւորներ գան ժողվուին Վոսիորի բերանը, որ է Պոդագ իջի, ու եւրոպական ցամաքին վրայ բերդ մը սկսաւ շինել՝ որ մինչեւ ցայժմ կասուի Բուվկի հիսարը: Յունաց կայսրը հասկըցաւ սուլթան Մէհմէմէտին միտքն ու զարհուրեցաւ, մարդիկ յուղարկեց այն ահեղ թագաւորին, կինդրէր որ ետ կենայ շինուածքէն, ու կխոստանար որ անոր տեղը տարեկան տուրք մը վճարէ Օսմանցուց: Թագաւորը պատասխան առաւ բարկութեամբ թէ «Իմ հայրս սուլթան Մուրատ վաղուց միտք ունէր Վոսիորին մէջ ամուր բերդ մը շինելու, նորա գիտաւորութիւնն է որ այժմ ես կկատարեմ, եւ միթէ իշխանութիւն չունիմ իմ երկրիս վրայ սրբան բերդերն ուր որ ուզեմ՝ կանգնելու: Գնացէք ասէք ձեր տիրոջն որ չկարծէ

թէ ես ալ իմ նախնիքներուս պէս եմ, նոցա անել չկրցածը ինծի համար շատ գիւրին բան է, Ուրիշ գետսկան ալ թող չգրկէ, ապա թէ ոչ՝ ողջ ողջ քերթել կուտամ զինքն ու մորթը իրեն կգարձընեմ»: Այս որ լսեց խեղճ կայսրը Կոստանդին, — որ բարեսիրտ՝ հայրենասէր ու կարիճ մարդ էր, բայց աւելի յաջողակ ժամանակի արժանաւոր, — յուսահատաբար սկսաւ տշխատել, որ ներսէն ամրացնէ քաղաքը, եւ պաշար ժողովել: Վայ այն մարդուն որ կհամարձակի իրմէ զօրաւորին՝ իրաւունքը իմն է ասելու:

Սուլթան Մէհմէմէտ Բուվկիի ամրոցին շէնք երեք ամսուան մէջ վերջացընել տալով՝ գարձաւ իւր աթոռը Ագրիանուպօլիս, որ է Բուվկիի էտիրնէ քաղաքը, եւ հոն Կոստանդնուպօլսոյ պաշարմանը պատրաստութիւն կտեսնէր: Օրպան անունով մաճառաղդէ մարդու մը յանձնեց այնպիսի թնդանօթ մը թափել որ Կոստանդնուպօլսոյ պաքիսպները անով կարենայ շուտ փլցընել: Թափուեցաւ թնդանօթը այնպիսի ահագին մեծութեամբ որ բերնին բացուածքը տասուերկու բթաչափ էր, եւ փորձի համար երբոր նետեցին, ուսմբը մէկ մղոն հեռու զնաց ու մէկ կանգուն տեղ խրեցաւ գետինը:

Գիշեր ցորեկ Կոստանդնուպօլսոյ առմանը վրայ կմտածէր սուլթան Մէհմէմէտ, եւ թէպէտ մտքին մէջ գրածը անպաաճառ պիտի կատարէր, բայց սըրտին անհանգստութենէն կենէր գիշերները էտիրնէի փողոցներուն մէջ ծպտեալ կքալէր որ հասկընայ թէ ժողովրդեան ու զօրքին բերանները ինչ խօսքեր

կպտըտին: Մէկ գիշեր մը յանկարծ մարդ զրկեց
 Խալիլ փաշային, որ իւր վէզիբն էր, ու քովը կան-
 չեց: Վէզիբը գիտնալով թագաւորին խօսուած իւնը,
 իրեն դէմ ալ տփգոհուած իւն ունեցածը, սարսափե-
 ցաւ. մէկ ափսէ (թիթի) մը ոսկի առաւ հետն ու տա-
 րաւ թագաւորին: Թագաւորը կէս հագուած նստած
 էր անկողնին վրայ. սոսկալի ձայնով մը կանչեց թէ
 «Այդ ինչ բան է: — Սովորուած իւն է, տէր իմ, որ
 ատենէ դուրս թագաւորի առջեւ կանչուող մարդը,
 պարապ ձեռքով պիտի չերեւնայ նորա աչքին, ասաց
 Խալիլ փաշան. բայց այս ալ իմ բանս չէ՝ տէր ար-
 քայ, քուկինդ է»: Թագաւորը վրայ բերաւ թէ «Ին-
 ծի այդպիսի բաներ հարկաւոր չեն. դուն այս ասա
 ինծի որ Ստամպոլն աննելու ճարը որն է»: Վէզիբը
 պատասխան տուաւ. «Արդէն Աստուած Յունաստանի
 մեծ մասը քու ձեռքդ տուեր է. տարակոյս չկայ որ
 անոր մայրաքաղաքն ալ ձեռքդ պիտի տայ. իսկ մենք
 քու ծառայքդ պատրաստ եմք մեր ունեցած չունե-
 ցածն ու մեր կեանքը դնելու՝ քու սիրոյդ համար»:

Գարնան օրերուն ալ չսպասեց այնուհետեւ սուլ-
 դան Մէհմէտ. 1455 ին փետրուար ամսոյն մէջ
 հրամայեց որ մեծ թնդանօթը տարուի Կոստանդնու-
 պօլիս: — Յիսուն հոգի առջեւէն ճամբաները կը շրա-
 կէին ու ջրերու եւ փոսերու վրայ կամուրջներ կը-
 ձգէին, եւ երկու հարիւր հոգի երկու քովէն կեր-
 թային որ մէկ դին կամ մէկալ գին չծըռի:

Այն միջոցին որ Օսմանցիք Բուսէլիի ու Անատօլուի
 ամէն կողմերէն դէպ ի Ազրիանուպօլիս կվաղէին որ

1453

այն մեծ պատերազմին պատրաստուած իւնը տեսնեն,
 Յոյնք Կոստանդնուպօլսոյ մէջ փակուած եւ իրենց
 քաղաքական խեղճութիւնը կարծես թէ մոռցած,
 մեծամեծ կռիւներու հետ էին իրարու դէմ հաւա-
 տոյ ինդիբներու վրայ: Վասն զի արդէն շատ տարի
 չէր որ եւրոպական տէրութիւններէն օգնութիւն
 գտնելու յուսով՝ իրենց կայսրն ու մեծամեծները յօ-
 ժարեր էին Փլորենտիոյ ժողովոյն մէջ լատին եկեղե-
 ցոյ հետ միաբանիլ. բայց հասարակ ժողովուրդն ու
 շատ եկեղեցականներ այնպիսի ատելութիւն մը ու-
 նէին չուովմայ պապերուն դէմ որ յայտնապէս կա-
 սէին թէ «Լաւ է Օսմանցուց ձեռքը անցնիմք՝ քան
 թէ պապին ու պապականաց գերի լինիմք»:

Վերջապէս ապրիլի 6-ին եկաւ հասաւ սուլդան Մէ-
 հմէտը երկու հարիւր հազար զօրքով, ու գրեթէ
 նոյնչափ գործաւորներով Կոստանդնուպօլսոյ դիմացը,
 եւ իւր վրանը (չասրը) զարկաւ քաղաքին էյրի գափու ա-
 սուած դրան առջեւը՝ բարձրկեկ բլուրի մը վրայ:
 Հրամայեց որ ցամաքի կողմէն ծայրէ ի ծայր պա-
 շարուի քաղաքը, եւ մեծ թնդանօթը տեղաւորուի
 սրբոյն Ռոմանոսի դրան առջեւը, որ այնուհետեւ Թօթի
 գափու ասուեցաւ, եւ սկսան անով պարիսպը թնտացը-
 նել: Օրուան մէջ եօթը անգամ հազիւ կրնային այն
 թնդանօթը արձրկել, վասն զի ամէն մէկ լեցընելուն
 երկու ժամ հարկաւոր էր. բայց ութերորդ անգա-
 մուն ճաթեցաւ, ու շատ մարդ սպաննեց, անոնց հեա
 նաեւ իւր թափող Օրպան մաճառը: Անոր տեղը ու-
 բիշ զանազան մեծ ու թեամբ թնդանօթներ շարուեցան

պարսպին այլ եւ այլ կողմերը, չորս հատ ալ շարժա-
կան աշտարակներ շինուեցան՝ ներսէն դրսէն եզան
կաշիններով ու հաստ թաղիքով (ֆեշու) պատած՝ որ
քաղաքացւոց արձըկած ուսմբերն ու քարերը անոնց
դարկած ժամանակին չվնասեն, այլ խրին, եւ ուժեր-
նին կօարի: Ուրիշ մանր մեքենաներուն՝ մանգղիոններ-
ուն՝ սանդուխներուն թիւը համրանքը չկար: Օսման-
ցւոց բանակին ետեւը կեցած էին հարիւր հազար ձիա-
ւոր զօրք. հարիւր հազար հետեւակ զօրք դէպ ի աջ
կողմը տարածուած էին, յիսուն հազար ալ դէպ ի պա-
րըսպին ձախ կողմը: Սուլթան Մէհմէտ տասնը-
հինգ հազար ենիչէրիներով բանակին մէջտեղը կե-
ցած էր, եւ Զաղնուս փաշան Ղալադիոյ ետեւը՝ կոս-
տանդնուպօլսոյ դիմացը՝ ընտիր ընտիր զօրքերով:

Օսմանցւոց նաւատորմիղը (սոնսնման) չորս հարիւր
քսան կտոր նաւ էր. անոնց մէջ տասնըութը հատ
մեծամեծ նաւեր կային՝ երեք երեք կարգ թիւեր ու-
նեցող, եւ քառասունութը նաւ՝ երկերկու կարգ
թիւակներով:

Յունաց մեծ յոյսը ձենուլացւոց վրայ էր. բայց նոքա
հինգհարիւրէն աւելի զօրք չունէին, թէպէտ նոցա
զօրավարը ծիւսրիսնի անունով քաջ մարդն էր՝ իւր
զօրքովը Ղալադիոյ մէջ ամբըցած. տասնը չորս հատ ալ
նաւ կար նաւահանգստին մէջ, շատը վենետիկեցւոց եւ
ուրիշ եւրոպացի ազգաց նաւեր: Սակայն իրենք Հո-
ռոմներն ալ իրենց հինգ հազար զօրքովը բաւական
քաջութեամբ կպատերազմէին. քանի որ պարսպին մէկ

կամ մէկալ կտորը կխախտէր՝ կփրլչէր, անգաղար
կաշխատէին փլած աեղերը քարերով ու փայտերով
կարկըտելու, եւ պարսպին տակերէն ասդիս ան-
դին ական (շաղալ) փորողները կրակով կվարէին կըը-
շէին: Յունական հուր անունով հռչակաւոր բաղագրու-
թիւն մը ունէին որ ջրին երեսն ալ կվառէր առանց
մարելու անցնելու. այն կրակով շատ վնասներ հա-
սուցին Օսմանցւոց, եւ նոցա շարժական աշտարակ-
ներէն մէկն ալ այրեցին, այնպէս որ սուլթան Մէ-
հմէտն ալ շատ զարմացաւ:

Ապրիլի 15-ին Օսմանցւոց նաւատորմիղը գնաց Պէ-
շիքդաշի առջեւը երկաթ նետեց: Քանի մը օրէն
հինգ կտոր նաւ դրսէն օգնութեան եկան Յունաց:
Այն ատեն Օսմանցւոց տորմիղէն հարիւր յիսուն նաւ
բաժնուեցան գնացին, նաւահանգստին բերանը կեցան,
ու չէին թողուր որ Հոռոմները ներս մտնեն. ուստի
այն տեղը սաստիկ պատերազմ եղաւ. վասն զի Յոյնե-
րը պնակներով կրակ կթափէին թշնամեաց վրայ,
մէկ կողմանէ ալ նետեր ու նիզակներ կտեղային կար-
կըտի պէս ու կհալածէին զանոնք:

Սուլթան Մէհմէտ ծովուն եզերքը կեցած կը-
նայէր. երբոր տեսաւ իրեններուն ցիրուցան փախչը-
տիլը՝ սաստիկ շփոթեցաւ, ու կատաղութենէն ակ-
ռաները կըճտելով զարկաւ ոտքը ձիուն ու յարձը-
կեցաւ վազեց կատաղի առիւծի պէս ծովուն ալիքնե-
րուն մէջ: Ետեւէն վազեցին նաեւ քովիները, եւ
եթէ կարենային՝ պիտի վազէին բունէին թշնամեաց

նաւերը, որ ցամաքէն շատ հեռու չէին: Բայց նոքա յաղթական կերպով անցան առջեւներէն ու մտան նաւահանգիստը. այնտեղ նորէն ձգուեցաւ երկրթէ շղթան՝ որ Ղալաթիոյ Պալըզ փազարը ասուած դըռնէն մինչեւ Կոստանդնուպօլսոյ միւս համանուն դուռը քաշուած էր միշտ, ու ժամանակ ժամանակ կարձըկուէր՝ նաւերուն ելած ու մտած ատենները:

Օսմանցւոց ծովակալն էր Պալքա օղլու անունով Բուլղարէ դարձած տաճիկը. Սուլթան Մէհէմմէտ այնքան բարկացաւ վրան որ կուգէր իսկոյն ցից հանելով սպաննել զինքը. բայց երբոր ենիչէրինքը շատ ազաչեցին որ խնայէ այն մարդուն, հրամայեց որ գետինը պառկեցընեն մարդը, եւ ինքը իւր ձեռքի լախտովը (քօփուզովը) հարիւր անգամ մը զարկաւ վիրաւորեց չարաչար:

Խալիլ փաշան տեսնելով որ Յոյները մեծ քաջութեամբ կպատերազմին, մանաւանդ որ այն նոր եկող նաւերը բաւական պաշար հասուցին նոցա, խորհուրդ տուաւ թագաւորին որ պաշարմանէն ետ կենայ: Հրամայեց Սուլթան Մէհէմմէտ որ խորհուրդ անեն իւր առջեւը մեծամեծներն ու գլխաւոր կարգացողները: Զաւնուս փաշան դէմ կեցաւ Խալիլ փաշային խորհրդոյն. նոյնպէս եւ Մուլա Մէհէմմէտ Կիւրանի, եւ Ագշէմսէտտին մեծ շէխը, որ անդադար բանակին մէջ վեր վար քալելով սիրտ կուտար Օսմանցւոց, ու կմարգարէանար որ անպատճառ պիտի տիրեն քաղաքին: Հարցուց թագաւորը թէ հասաւ ինչ կմտածէք, ինչ

կերպով կարելի է նաւահանգստին բերնի հաստ շղթաները կոտրտել՝ որ կարենաք ծովէն ալ պատերազմիլ քաղաքին հետ. նոքա ամէնքն ալ տարակուսած՝ չկրցան պատասխանել. Աներկիւղ եւ մեծագործ թագաւորը այն գոռարութիւնը իսկոյն լուծեց. «Ասոր մի միայն ճարը այն է՝ ասաց, որ Պէշիքդաշէն՝ Ղալաթիոյ ետեւէն անցնիմք նաւերով ու շիտակ նաւահանգստին մէջ իջնամք: Իրաւ որ միջոցը շատ մեծ տեղ չէր, երկու ժամուան մէջ կարելի էր կտրել. բայց գետինը դարուփոս լինելով՝ կարելի չէր նաւերը քշել տանիլ այն տեղերէն. հրամայեց թագաւորն որ տախտակներ շարուին բոլոր այն միջոցին երկայնութեամբը՝ ճամբայ ձեւացընեն, եւ այն ճամբան ճարպով եղեն, վրայէն սահեցընեն նաւերը: Այնպէս ալ արին: Մէկ գիշերուան մէջ եօթանասուն կտոր երկկարգեան թիակներով ցականաւ եւ ուրիշ մանր ու խոշոր նաւեր՝ առագաստները քամիին տուած սահեցան տախտակէ ճանապարհին վրայէն ու իջան լցուեցան նաւահանգիստը՝ թմբուկներու եւ փողերու ձայներով ու սարօտիկի աղաղակներով. այնպէս որ խեղճ քաղաքացիք ապշեցան մնացին. հասկըցան որ ծովին կողմէն ալ պիտի պաշարուին:

Ճիւսթ ինիանի ձենովացին միտքը դրաւ երկրորդ գիշերը որ կրակ տայ Օսմանցւոց նաւերուն, ամէնն ալ բռնկեցընէ այրէ. բայց նոյն իսկ ձենովացիներէն մէկը մասնեց՝ հասկըցուց թշնամեաց իրենց զօրապետին միտքը. Օսմանցիք ալ որ արթուն կեցած էին, ձիւսթ ինիանիին մօտենալը տեսածներուն պէս՝ թըն-

դանօթ մը արձըկեցին նորա նաւուն վրայ. նաւը կտորտեցաւ, մէջի հարիւր յիսուն խաւացի նաւավարները ջուրը թափեցան, եւ միայն ձիւսթինիանին լողալով փախաւ ազատեցաւ:

Անոր երկրորդ օրը հրամայեց թագաւորն որ նաւահանգստին վրայ ահագին լաստ (սալ) շինեն կամըրջի նման՝ հինգ կանգուն լայնութեամբ եւ հարիւր կանգուն երկայնութեամբ. այն լաստին տակը մեծամեծ տակառներ կային քովէ քով շարուած, երկըթէ ճանկերով իրարու հետ կապած ու վրաները տախտակներ դամած. եւ այնուհետեւ ծովի կողմէն ալ պաշարուեցաւ խղճալի մայրաքաղաքը:

Արդէն Թօփ դափուի կողմը պարսպին մէկ մեծ կտորը փլած էր; չորս աշտարակ ալ կործանուած էին. այնպէս որ տարակոյս չկար որ Օսմանցիք շուտով պիտի տիրեն քաղաքին. բայց սուլթան Մէհմէմէտ՝ այն բմբիշներուն նման որ հասկընալով իրենց ոսոխին տկարութիւնը՝ գետին զարնելէն առաջ կը պահանջեն նորա խոնարհիլը; իւր ազգական Իսփէնտիար օղլուն յուզարկեց Յունաց կայսեր ու խորհուրդ տուաւ որ հնազանգի հպատակի իրեն, եւ այնպէս ազատէ ինքզինքն ու իրենները գերութեան նախատինքէն. խոստացաւ որ Մոռան իրեն թողու՝ որ հոն ինքնագլուխ թագաւորէ, միտքը այս էր որ քաղաքին ամբողջութիւնն ու շէնքերը սրբան կարելի է պահպանուին ու զուր տեղը երկու կողմէն արիւն չթափուի: Կայսրը պատասխանեց թէ « Ես իմ մարդիկներովս

աչքերնիս առած եմք այս քաղաքիս աւերակներուն տակը թագաւոր՝ քան թէ անձնատուր լինել. թէ որ սուլթանը կուզէր վեհանձնութիւն ու խաղաղասիրութիւն ցուցնել, պէտք էր որ գոհ լինէր մեզնէ տարեկան տուրք առնելով՝ ինչպէս որ իւր նախնիքը կանէին. եւ ոչ թէ այս կերպով գար՝ մեր մայրաքաղաքը մեր ձեռքէն պահանջէր »:

Սուլթան Մէհմէմէտին ուղածն ալ այսպիսի պատասխան մը լսելն էր. ուստի իսկոյն հրամայեց որ բոլոր զօրագլուխները գան ժողովուն առջեւը. երդում անելով խոստացաւ նոցա որ Կոստանդնուպօլսոյ բոլոր բնակիչներն ու անոնց ունեցած չունեցածը նոցա թողու; եւ միայն պարիսպներն ու շէնքերն իրեն պահէ: Ասոր վրայ սարսափելի ուրախութեամբ ազաղակ վերուցին բոլոր Օսմանցիք, եւ ցամաքին ու ծովուն վրայ բերաւոր կրակներ վառելով լուսաւորութիւն արին: Քաղաքացիք կարծեցին առջի բերանը թէ Օսմանցուց բանակին մէջ կրակ ընկեր է. բայց երբ իմացան նոցա ուրախութեան ձայներէն որ վերջին յարձակման պատրաստութիւն է այն, իրենք ալ իրենց վերջին քաջութիւնը ցուցնելու պատրաստուեցան: Բայց Յոյներէն աւելի սեանդով աշխատողները խաւացիներն էին, եւ մանաւանդ նոցա գլխաւորը ձիւսթինիանին, որ թէ խորհրդով՝ թէ խօսքով եւ թէ անձամբ աշխատելով ու պատերազմելով մեծապէս կօզնէր յուսահատ չողումներուն, եւ Օսմանցուց ոչ սակաւ վնաս կհասցընէր:

Մայիսի 28-ին հրաման հանեց թագաւորը բո-
լոր բանակին մէջ որ ամէնքը պատրաստ լինին երկ-
րորդ առաւօտը քաղաքին վրայ վերջին յարձակումն
անելու. ուստի իրիկուան արեւուն մօտը մտած ժա-
մանակը, որ արեւելեան կայսերութեան վերջանալուն
տխուր մէկ օրինակն էր, այնպիսի սոսկալի աղաղակ
մը վերուցին Օսմանցիք որ զէնքերուն ու փողերուն
ձայներուն հետ մէկտեղ խառնուելով՝ փոթորիկէ
խառնուելով ահագին ծովու գոռում գոչումին պէս բոլոր
լսողաց ականջները կը թնոտացընէին:

Այն ատեն Կոստանդին կայսրը ելաւ գնաց մայր
եկեղեցին, որ էր Ա. յա. Սոփիան, այսինքն սրբոյն Սո-
փիայի հոյակապ տաճարը. հաղորդուեցաւ սուրբ խոր-
հրդոյն, թողութիւն խնդրեց պալատականներէն ու
պատրաստուեցաւ քաջութեամբ մեռնելու: Նոյնպէս
արին նաեւ մեծամեծներէն շատերը, եւ ամէնքը առ
հասարակ կուլային ու կողբային դառն արտասուօք:
Բոլոր այն գիշերը ամէնքն ալ արթուն կեցան, եւ
կայսրը իւր զօրավարներէն խիստ հաւատարիմները
հետն առած՝ անդադար կպտըտէր ձիով պարիսպ-
ներուն քովերն ու սիրտ կուտար զօրքերուն:

Արեգակը ծագելու մօտ էր, սկսաւ ահագին պատե-
րազմը: Որչափ փող ու թմբուկ որ ունէին Օսմանցիք՝
զարկին հնչեցուցին, իրենք ալ առ հասարակ վայրենի
կատաղութեամբ Ալլան կփպեր, եայրան, հնու կանչուըւտե-
լով՝ բոլոր թնդանօթները մէկտեղ արձըկեցին, եւ ա-
մէնքը ամէն կողմէն քաղաքին վրայ վազեցին՝ ինչպէս
որ բիւրաւոր ուրուրներ աղաւնոցի մը վրայ յարձըկէին:

Երկու ժամէն աւելի քշեց այն մոլեգին յարձակու-
մը. եւ որպէս զի մէջերնէն շատը յուսահատութեամբ
ետ չդառնան չփախչին՝ կարգ կարգ զօրքեր ալ շա-
րուած էին պատերազմողներուն ետեւն ու երկըթէ
գաւազաններով ու հաստ կաշիէ մտրակներով կծե-
ծէին զանոնք ու առաջ կքըշէին: Ինքը թագաւորն
ալ ահագին լախար ձեռքը բռնած՝ անդադար սիրտ
կուտար կանչուըւտելով իւր զինուորներուն: Աշտա-
րակներուն վրայէն քարերը կարկառի պէս կթափէին
Օսմանցոց գլխուն. յունական կրակը հեղեղի պէս կը-
վաղէր նաւահանգստին պարիսպներէն վար. սանդուղ-
ներ սանդուղներու զարնուելով կը կտորտէին, ուսմբ
ուսմբի պատահելով՝ սոսկալի ճայթմունք կհանէին,
եւ վերէն ու վարէն ելած թանձր փոշին մշուշի պէս
քաղաքին վրայ ծածկած՝ արեւուն լոյսն անգամ կխա-
փանէր. հասեր էր խեղճ քաղաքին խաւարային օրը:


Զարնուեցաւ այն միջոցին քաջն ձիւսթինիանի.
աղաչեց որ կայսրը իւր տեղը բռնէ, ու ինքը փա-
խաւ գնաց Ղալազիա. ասոր վրայ զօրքերուն ձեռքը
թուլցաւ՝ յուսահատեցան. Զաղնուս փաշան տեսաւ
Թօփ գափուին կողմէն որ պաշարելոց մէջը մեծ շիտ-
թութիւն ընկած է. աւելի ալ սկսաւ իւր ենիչէրի-
ները վառել բորբոքել: Հասան անունով ենիչէրիին
մէկը՝ աջ ձեռքը թուր, ձախ ձեռքովն ալ վահանը
գլխուն վրայ բռնած, պատին վրայէն ճանկըւտուե-
լով վեր ելաւ, ետեւէն ալ երեսուն հոգիի չափ. բայց
Յայներն անոնց գլխուն քարեր՝ նետեր՝ նիզակներ
թափելով՝ դետինը կձգէին ետեւէ ետեւ, այնպէս որ
Հասանն ալ ընկաւ անոնց տակը թաղուեցաւ:

Թօփ գափուին դիմացը այս սաստիկ պատերազմին բռնուած՝ երբոր երկու կողմէն կատաղաբար կը կռուէին, Օսմանցւոց մէջէն յիսուն հոգի Այվան սէրայ գափուսու ասուած դռնէն ներս մտան. վասն զի Յոյնք մտքերնին դրած էին որ իբր թէ մարգարէա կան գուշակութիւն մը կայ որ թշնամիները այն դռնէն ներս պիտի մանեն, ու նոյն դռնէն դարձեալ դուրս պիտի քշուին. ուստի կայսրը հրամայեց էր որ այն դուռը շատ ամբոցած չլինի: Ներս մտնող Օսմանցիներն որ սկսան պարսպին վրայի Յոյներուն հետ ներսէն ծեծկուիլ, ձայն ելաւ Թօփ գափուին կողմերը թէ առնուեցաւ քաղաքը, եւ նորէն իրար անցան կայսեր զօրքերը: Իսկ ինքը ցաւալի կայսրն Կոստանդին երբ տեսաւ որ ճար ճարակ չկայ իւր մայրաքաղաքն ազատելու, աղաղակեց ձիուն վրայէն թէ « Լաւ է որ մեռնիմ քան թէ այսուհետեւ ապրիմ»: Այս ասաց ու յարձրկեցաւ ընկաւ ներս վազող Օսմանցւոց վրայ, սոսկալի ջարդ մը տուաւ նոցա. քայց տեսնելով որ իրեններէն մէկն ալ չմնաց քովը իրեն օգնական՝ աղիողորմ ձայնով մը գոչեց. « Եւ միթէ մէկ քրիստոնեայ մի ալ չկայ որ իմ գլուխս կտրէ»: Խօսքը դեռ բերանն էր, երկու ենիչէրի վըրան վազեցին, ետեւէն ու առջեւէն զարկին գլխուն ու կռնակին՝ մեռուցին զինքը. եւ այսպէս ընկաւ քաջութեամբ Կոստանդին ժի Պալէօլոգ Յունաց վերջին կայսրը յիսուն տարեկան ժամանակին:

Նոյն միջոցին կատղած ծովու ալիքներուն նման ներս թափեցան Օսմանցիք նաեւ էյրի գափու ասուած

դռնէն՝ գետնին երեսը փռուած դէզ դէզ մեռելներու վրայէն անցնելով. բոլոր դրսի խրամներն ու պարսպին փլած տեղերը Օսմանցւոց դիակներով լցուած էին, իսկ ներսինները Հոռոմներով, Իտալացիներով ու նաեւ Օսմանցիներով. սոսկալի էր այն ջարդն որ Օսմանցիք պարսպներէն կուտային յուսահատաբար փախչողներուն, եւ ո՛վ որ իրենց առջեւը կպատահէր՝ ամենուն: Նոքա կարծէին թէ այնքան քաջութեամբ քաղաքին պաշտպանութիւն անող զինուորները գոնէ յիսուն հազարէն պակաս չեն. ուստի երբ տեսան որ գրեթէ մարդ չէ մնացեր, ամէնքն ալ ջարդուեցին, շատ ավստացին, վասն զի կուղէին ողջ բռնել զանոնք ու գերի տանիլ. այնուհետեւ ամէն մարդ թուրը ձեռքը սկսաւ վազել դէպ ի որ կողմն որ կամեցաւ, եւ քաղաքացիք շփոթած սարսափած՝ չէին գիտեր ո՛ւր փախչին, ո՛ւմ ապաւինին:


Քաղաքացւոց մէկ մեծ քաղմութիւնը՝ մէջերնին դայլեր ընկած գառներու պէս՝ խառնադոչ ձայներով վազեց գնաց նաւահանգիստն որ իբր թէ Յունաց ու ձենովացւոց նաւերը մանէ. բայց նաւահանգստին դուռը փակ գտան: Անկից մէկգմէկ կտնկրուեցին վազեցին որբոյն Սոփիայ տաճարը էրիկմարդ կնիկմարդ, ծեբ եւ աղայ. վասն զի մտքերնին դրած էին՝ սուր գուշակութեան մը հաւատացած լինելով՝ թէ երբոր Օսմանցիք մեծին Կոստանդիանոսի անկած սիւնին քով հասնին՝ հրեշտակ մը պիտի իջնէ երկնքէն, հասարակ խեղճ մարդու մը ձեռքը թուր ու թագաւորական գաւազան պիտի տայ ինքեանքս: Ան Աստուծոյ



ժողովրդեան վրէժը»։ Յոյներն ալ այն մարդուն ետեւէն վաղելով պիտի զարնեն քշեն հալածեն թշնամիները մինչեւ Պարսկաստան։

Սրբոյն Սովիայ եկեղեցին, որ աշխարհիս մեծամեծ տաճարներուն առաջիններէն մէկն է ընդարձակութեամբն ու հարստութեամբը, մինչեւ այն օրը գրեթէ պարապ էր՝ ժողովրդոց անմիաբանութեանն ու հաւատոյ կռիւներուն պատճառաւ։ Վասն զի Յոյնք ալ՝ զարմանալի կուրուսեամբ մը՝ իրենց ազգին ու եկեղեցւոյն օր օրէ եւ ժամ ի ժամէ ոսնակոխ լինելն ու ջնջուելու վրայ գտնուելը կարծես թէ չտեսնելով կամ չմտածելով, իրարու միս կուտէին՝ իրենց եւ ուրիշներու խելքին ոչ երբէք հասնելիք աստուածաբանական խնդիրներով։ օրինակի համար՝ թէ Հագին սուրբ արգեօք ի Հօրէ միայն ելանէ ասելու է՝ թէ նաեւ յՈրդւոյ . . . արգեօք լատինացւոց պէս՝ անդի ի աշխարհքը քաւարան կայ ասելու է՝ թէ չկայ . . . արգեօք պատարագի խորհուրդը խմորուն նշխարքով կատարելու է թէ բազարջով եւ այլն։ Իսկ այն սուկալի օրը, այն սարսափելի միջոցին, լցուեցաւ եկեղեցին ծայրէ ծայր անթիւ բազմութեամբ, որ դռները ներսէն փակած՝ ողիկ ողիկ կուգային, աչքերուն առջեւը անանելով իրենց գլխուն եկած ու գալիք վայնասունները։

Չուշացաւ գալու այն զարհուրելի փոթորիկը՝ որուն կսպասէին խեղճ քաղաքացիք եկեղեցւոյն մէջ։ Հասան Օսմանցիք, զարկին կոտորուեցին տաճարին դռները, մտան ընկան ժողովրդեան մէջ իբրեւ ի




դոմ՝ մի ոչխարաց, ձեռքերնին եկածը քաշեցին քաշկըռտեցին՝ կապեցին կապկըպեցին չուաններով ու գօտիններով՝ երկուքը երեքը մէկուեղ, առանց ամենեւին նայելու էրիկ մարդն ու կնիկ մարդը, մեծն ու պղտիկը, աշխարհականն ու եկեղեցականը, հարուստն ու աղքատը, որ գերի անեն ու տանին ծախեն։ Ի՛նչ սոսկալի եւ քստմնելի տէսարան էր այն՝ երբոր կատաղի, եւ քրիստոնէութեան յետերիմ թշնամի Օսմանցիները եկեղեցւոյն մէջի պատկերները զարդարանքները պատըռտեցին, ոտքի տակ կոխկըռտեցին, փճացուցին. ոսկիէ ու արծրթէ անօթներն ու զարդերը կողոպտեցին թաւնեցին, սուրբ սեղանոյ ծածկոյթները իրենց ձիերուն ծածկոց արին, եւ նոյն իսկ սեղանները ձիերուն խոտ ուտելու եւ իրենց պառկելու տեղ շինեցին։

Վերջապէս Ուն գափանը գափուտաւ ասուած դրոնէն եւ ուրիշ ամէն կողմերէն քաղաքին մէջ թափեցան Օսմանցիք, ու սկսան աներն ու եկեղեցիները կողոպտել։ — Այս կերպով առնուեցաւ ահա մեծ մայրաքաղաքն Կոստանդնուպօլիս՝ մայիսի 29-ին՝ յիսունուերկու օր այնպիսի սաստիկ պաշարման դիմանալէն ետքը։

Սուլթան Մէհմէտ իւր զօրացը հետ ներս չմտաւ. սպասեց որ լսէ թէ քաղաքին ամէն կողմերն ալ իրեններուն ձեռքը անցեր են, եւ այնուհետեւ կէսօրուան մօտ՝ բոլոր վէզիրներովն ու թիկնապահ զօրքերովը գնաց շիտակ սրբոյն Սովիայ եկեղեցին, իջաւ ձիէն, ներս մտաւ, ու ապշած մնաց տաճարին մեծութեանն

ու գեղեցկութեանը վրայ: Աչքը վար առաւ, տեսաւ որ զինուորներէն մէկը եկեղեցւոյն յատակին ազնիւ մարմարիոնները կքակէ, որոց վրայ գեղեցիկ կերպով փորագրուած ու ալիք ալիք վազուածքով ձեւացուցած էին դրախտին չորս գետերը՝ որ իբր թէ



Վաստիոնի մէջ Չրաղանի պատարը. — Թագաւորի նախակը.

եկեղեցւոյն չորս դռներէն դուրս կվաղէին: Ձեռքի թրովը զարկաւ իսկոյն թագաւորը այն զինուորին ու ասաց. « Ես ձեզի հրաման տուի քաղաքին հարստութիւնը կողոպտելու. այս շինուածքները իմս են »: Քաջեցին դուրս ձգեցին մարդը որ արգէն կէս մեռած էր:

Յետոյ հրամայեց թագաւորը կարգացողներէն մէկուն որ ելնէ եկեղեցւոյն ատենը կամ բարձր ամպիոնը, եւ մահմէտականաց դաւանութեան ձեւը կարգային իրանի իլալանի վե Մուսանեհս ռեսուլտլան, այսինքն Չկայ Աստուած բաց յԱստուծոյ, եւ Մուհամմէտը Աստուծոյ

առաքեալն է. եւ ինքը ելաւ աւագ սեղանին վրայ առաջին նամազը կատարեց. եւ այնպէս « Աստուածային Իմաստութեան » նուիրեալ քրիստոնէական հոյակապ տաճարը՝ դարձաւ եղաւ մզկիթ մահմէտականաց, թէպէտ եւ անունը անփոփոխ մնաց՝ Այս Սօփիա ճամբուի:

Այս Սօֆեայէն ելնելուն պէս հարցուց սուլգան Մէհէմմէտը թէ արդեօք Կոստանդին կայսրը ձենովացուց հինգ նաւերուն հետ փախաւ ազատեցաւ թէ ոչ : Երկու ենիչէրիք իսկոյն կանչեցին թէ մեք մեռուցինք զինքը, եւ դնացին մեռելներուն մէջ գտան արիւնլուայ մարմինը, ճանչնալով ծիրանի ոսկեթել կօշիկներէն՝ որոց վրայ արծուի նշան բանած էր : Հրամայեց թագաւորն որ կայսեր գլուխը անցընեն Սարայ մէյսանը ասուած հրապարակին մէջ Կոստանդիանոսի կանգնած մէկ սիւնին ծայրը, եւ իրիկուան գէմ վար իջեցընեն. մորթն ալ քերթեն վրայէն, ու յարդով լեցուցած տանին Ասիոյ քաղաքները պարտցընեն՝ իրեն մեծ յաղթութեանը նշան. իսկ մարմինը տուաւ Յունաց որ թաղեն :

Յունաց ծովակալը Ղուկաս Նոսարաս եկաւ սուլգան Մէհէմմէտին իւր հպատակութիւնը յայտնելու. բայց նա մեռելներուն բազմութեանն ու գերիներուն խուժանին նայելով ասաց Նոտարասին. «Տեսնա՛ր քու հակառակութեանդ պտուղը». Նոտարասը պատասխանեց թէ «Ոչ ես կարողութիւն ունէի քաղաքացուց խօսք անցընելու որ անձնատուր լինին, եւ ոչ կայսրը. մանաւանդ որ գրսէն թղթեր ալ կառնէինք որ դիմանամք՝ չխոնարհիմք» : Թագաւորը իսկոյն կասկածի գնաց որ այն դաւաճանութիւնը խալիլ փաշային բանն է. բայց նշան չտուաւ, յարմար ժամանակի սպասելով որ վրէժը հանէ :

Ձենովացիք որ մինչեւ այն ատեն Ղալադիոյ բերդին մէջ ամբըցած կեցած էին, բերդին բանալիները

տարին թագաւորին ու աղաչեցին որ գթութեամբ վարուի բնակիչներուն հետ. եւ նա խօսք տուաւ :

Երկրորդ օրը սուլգան Մէհէմմէտ նորէն քաղաք մտաւ ձիով ու Նոտարասի պալատը գնաց, երբոր այն վատ մարդը թագաւորին ոտքն ընկած՝ կցուցընէր պահած գանձերն ու կասէր թէ «Ահա ասոնք քեզի համար պահեցի՝ տէր իմ» : Թագաւորը հարցուց թէ «Ասոնք ամէնն ու բոլոր այս քաղաքը ինձի տրուին ո՞վ է : — Աստուած՝ ասաց Հոռոմը : «Ուրեմն ես Աստուծոյ պէտք է շնորհակալ լինիմ» ոչ թէ քեզի» ասաց թագաւորն ու գնաց քաղաքին պարապ ու կիսաւեր փողոցները քալեց : Երբոր մտաւ կայսերական պալատն ու անցաւ երկու մեծամեծ դահլիճներէն, որ անմարդաձայն տխուր լռութեան մէջ թաղուած էին, միտքն ընկաւ այն Պարսից բանաստեղծի մը խօսքն որ կասէ.

«Կայսերական պալատին մէջ մամուկը բոյն էր կապեր,

Էֆրասեսապի կամարաց տակ գիշերային բուն կերգեր» :

Բայց այսպիսի փիլիսոփայական մտածութիւնները բաւական չեղան զինքը անգթութիւններէն ետ կեցընելու : Մէկմէկ սնտոի պատճառներով սպաննել տուաւ, ոչ միայն Նոտարասը անով տեղով, այլ եւ Վենետիկեցուց ու Սպանիացուց գեսպաններն ու նոցա որդիքը, եւ ուրիշ շատ Յոյներ ու Եւրոպացիներ :

Կոստանդնուպօլսոյ առնուելուն երրորդ օրը արձրկեց զօրքերը որ ամէն մարդ իւր տեղն երթայ, որով քաղաքը բոլորովին պարպուեցաւ իւր հին բնակիչներէն ու ամէն տեսակ վայելչութենէն : Հրամայեց սուլ-

դան Մէհէմմէտն որ Ալադիոյ սլարխսպը ցամաքին կողմէն բոլորովին կործանեն, եւ մեծ աշտարակը՝ որ կասուի Ապրադա գուրխի՝ կարծեցընեն, էարէնէ գափուսու ասուած դրան հաւասարեցընեն. յետոյ Տրապիզոնէն՝ Սինոպէն եւ ուրիշ քաղաքներէ հինգ հազար տաճիկ տնուոր բերել առաւ, շատ մըն ալ պատ ու աղիւս շինողներ որ քաղաքը շէնցընեն ու բնակին: Յունաց պատրիարք հաստատեց Գէորգ վանականը, որ Գեննագիոս ալ կասուի, եւ մեծ պատուով յանձնեց անոր Յունաց ազգապետութիւնը: Իսկ ինքը քսան օր ետքը դարձաւ առ ժամանակ մի Ագրիանուպոլիս, հետը տանելով գերիներուն մէջէն բնախրներն ու աւելի աչքի զարնողները:

Սյս կերպով եղաւ ահա Կոստանդնուպոլսոյ ցաւալի ու անմոռանալի առումը, որոյ նման եղած գիտեմք միայն երուսաղեմի առումն ու կործանումը՝ Հռովմայեցւոց ձեռքովը: Շատ երկար ու զարմանալի պատմութիւններու նիւթ են նաեւ անկից ետքը մինչեւ 400 տարիի չափ այն օսմանեան մայրաքաղաքին մէջ պատահած մեծամեծ անցքերը, աէրութեան խռովութիւնները, սոսկալի անգթութիւնները, սարսափելի կրակները, ենիչէրիներուն բռնութիւնները, քրիստոնէից քաջած նեղութիւնները, ինչպէս նաեւ սէրութեան եւ մեծամեծաց ասիական պերճութիւնները, քաղաքական եւ զինուորական հանդէսները, եւ այլն եւ այլն:

Մեք հարկ կհամարիմք այս միայն աւելցընել ի վերջ աղետալի առման գերահռչակ մայրաքաղաքիս՝

ի մխիթարութիւն սրտացաւ ունկնդրաց, որ այժմու Կոստանդնուպոլիսը եւ նորա մէջ տիրող ազգը թէ եւ նոյն են՝ ինչ որ էին Յաթիհ սուլթան Մէհէմմէտին ժամանակը, բայց մէջի բնակիչներուն վիճակը այն չէ ամենեւին, այլ երեսունըհինգ կամ քառասուն տարիէ ի վեր մեծապէս փոխուած է դէպ ի լաւն եւ օրէ օր կիտխուի: Ո՛ւր մնացին այն մեռելի գլուխներն ու ոսկորները՝ որ Սարայ պուռնուի պարխաֆներէն սոսկալի զարգարանքներու պէս կախուած կերեւային: Ո՛ւր մնացին այն կախուած կամ գլխատուած յանցաւորներուն եւ անմեղներուն մարմինները որ դրեթէ ամէն օր՝ ամէն գլխաւոր փողոցներու գլուխները յանկարծ կզարնուէին անցնող զարձողի աչքին: Ո՛ւր մնաց այն սարսափը՝ որով մէկ քրիստոնեայ մը չէր համարձակեր մահմէտականաց մէկուն նաեւ յետին մուրացկանին նման հագուստ մը հագնելու, կամ գըլխու զարգ մը դնելու՝ նորա դրածին նման. առաւօտը անէն ողջ կենէր՝ առանց գիտնալու որ իրիկունը ողջ տուն պիտի դառնայ. եւ եթէ գառնար՝ խիստ քիչ անգամ կպատահէր որ ականջները լցուած չլինէին հազար տեսակ նախատանօք ու հայհոյանօք իւր հաւատքին ու ազգութեանը դէմ: Սուլթան Մահմուտին վերջի տարիներէն մինչեւ նորա երկու որդւոց թագաւորութեան ժամանակը այնքան փոխուած է Կոստանդնուպոլսոյ բնակիչներուն վիճակն ու կեանքը, որ եթէ եւրոպական ազատութեանց հետ հաւասարապէս աճէին նոցա մէջ եւրոպաց քաղաքականութիւնը, վաճառականութիւնը, ճարտարութիւնը՝

կրթութիւնը եւ նիւթական հարստութիւնը, յիշուի
կարելի էր յուսալ որ քիչ ժամանակէն Կոստանդնու-
սոլիսը գառնայ մայր ամենայն մայրաքաղաքաց Ասիոյ
ու եւրոպայի, եւս եւ ամենայն աշխարհի :

Եւ ինչո՞ւ չէ : Ի՞նչ բան կապկտէր այն տեղւոյն եւ
քաղաքին՝ բոլոր տիեզերաց մայրաքաղաքը լինելու
համար : Տեսէք ինչպէս կստորագրէ զայն Գաղղիա-
ցւոց այժմու պերճախօս մատենագիրներէն մէկը,
Թէոֆիլ Կոթիէ. « Կգովեն, կասէ, նափօլի քաղաքին
« ու անոր ծովածոցին գեղեցկութիւնը. բայց այն ինչ
« է Կոստանդնուսոլսոյ առջեւը, որ իւր եօթը բլուր-
« ներուն վրայ քնքուշ փափկութեամբ ընկողմնած կե-
« ցած է, ոտուրները շափիղայի ու զմրուխտի գու-
« նով ջրին մէջ երկընցուցած, եւ գմբէթներով ու
« մինարէներով պսակուած գլուխը կլողացընէ վար-
« դագոյն ու կապուտակ երկնքի մը մէջ որ կարծես
« թէ արծաթափայլ բեհեզի մը ետեւէն կցօլայ : Այն
« ինչ չնաշխարհիկ շրջատեսարան (փանօրանա) է որ
« կբացուի Սարայ-պուռնուէն ներս մտնողին առջե-
« վը, որոյ մուտքը լցուած կուած է շոգենաւերով,
« մակոյկներով, քիֆններով, մարուններով, եւ ու-
« ըրիշ կերպ կերպ իրարմէ գեղեցիկ նաւերով՝ նա-
« ւակներով. մէկ կողմը հին պալատին պսակածեւ
« պարիսպները, ֆօշթերն ու նոճիները, մէկալ կողմը
« Ղալազիոյ ու Բերայի շինուածքները . . . եւ երբոր
« աչքդ գէպ ի Գասը-ֆօյ դարձնես՝ այն ինչ սքան-
« չելի տեսարան է որ կտեսնես : Կնայիս հեռուն՝
« Բիւթանիոյ Ողիմպոս լեռը (Քէշիշ-սաղը) ձիւնապատ

« գլուխը կապուտ երկնքին մէջ բարձրացուցած . փոքր
« Ասիոյ (Անասոյուի) անուշ ու կակուղ գծագրութիւննե-
« րը՝ լուսափայլ մշուշով մը պատած . Իշխանաց կըլ-
« զիները (ասակերը) որ Մարմարայի ծովուն փալիւրուն
« ջրերուն մէջ համաստեղութեան մը աստղերուն պէս
« կլառււրուին. եւ ձախ կողմը Իւսկիւտար, որ գոյն-
« զգոյն աներովն ու մզկիթներուն ճերմակ ճեր-
« մակ մինարէներովը՝ իւր գերեզմաննոցին նոճի-
« ներէ ձեւացած ահագին վարագուրին վրայ կտարա-
« ծուի, այն գերեզմաննոցին որ իւր գեղեցկու-
« թեամբը մարդուս բաղձանքը կբերէ մեռնելու :

« Հապա որ գէպ ի Վոսփօր վեր երթաս, այն ինչ
« կախարդասար տեսարաններ, այն ինչ մոգական
« պատկերներ են որ ետեւէ ետեւ առջեւդ կտարա-
« ծուին : Աչուրներդ չեն գիտնար թէ սըրնային. եւ-
« րոպայի թէ Ասիոյ ծովեզերքը. վասն զի երկուքն ալ
« հաւասարապէս գեղեցիկ են. Չրազանի պալատը . . .
« Պէշիքդաշի պալատը . . . Վալիտէ սուլթանին, Սայիտ
« փաշային, Ռէշիտ փաշային եւ ուրիշ մեծամեծաց
« ամարանոցները կուգան իրարու ետեւէ. անոնց մէջ-
« տեղուանքը սրճանոցներ, պատշգամներ (ֆօշթեր),
« զուարճալի գեղեր, կանաչազարդ պարտէզներ, ո-
« րոց ճոխ ու հարուստ դալարիները արագընթաց
« ակնավճիտ ջրերուն մէջ կզարնեն, եւ այնպիսի
« զմայլելի տեսարան մը կձեւացընեն որ վրան նայո-
« զը չկըշտանար » :

Արդեօք ինչ է Կոստանդնուսոլիսը մեր Հայոց ազ-
գիս համար . . . Ասոր պատասխանը գիւրաւ կարող է

գտնել ո՞վ որ գիտէ թէ անոր ութը հարիւր հազար
 բնակիչներուն 250 հազարը Հայ են, Պատրիարքով,
 ազգային խորհրդարանով, եկեղեցիներով, գալրոցնե-
 րով, վաճառանոցներով, արհեստանոցներով. եւ
 գուցէ իրաւունք ունի համարելու թէ Կոստանդնու-
 պօլիսն է այսօրուան օրս նաեւ Հայոց (չեմ'ասեր Հայ-
 ասսակի) առաջին մայրաքաղաքը. . .

Եթէ իրաւ է այն խօսքը թէ մարզն է տեղւոյն
 յարգը աւելցընողը, եւ ոչ թէ տեղն է որ մարդուս
 արժանաւորութիւն կուտայ, — թող ուրեմն Կոստանդ-
 նուպօլսոյ բնակիչները՝ ինչ ազգէ ալ որ լինին՝
 իրենց չնաշխարհիկ քաղաքին բնական տղնուութիւնն
 աւելցընեն ամէն տեսակ յառաջագիմութեամբ. այն
 ատեն յիրաւի նախանձելի կլինին ամենայն աշխարհի,
 կմոռնան իրենց հարիւրաւոր տարիներով քաշած նե-
 ղութիւնները, եւ կմոռցընեն նաեւ իրենց մայրա-
 քաղաքին հին եւ նոր ժամանակներ տեսած աղետալի
 դժբաղդութիւնները:



ԾԱՆՈՒՅՈՒՄՆ.

Որովհետեւ այս հրատարակութեանս նիւթերը
 երկու գլխաւոր խումբ կբաժնուին, մէկը կրօնական
 եւ միւսը արսսիկ, արժան դատեցինք՝ ըստ խըն-
 դրոյ եւ խորհրդոյ բանագէտ անձանց՝ ընդհանուր
 անուններով եւս զանազանել ասոնք իրարմէ. կրօ-
 նականներուն տալ ՔԱՐՈՋ անունը, արտաքիննե-
 րուն պահել ԼՍԱՐԱՆ բառը:—Յայտնի բան է որ այս
 զանազանութեամբ մեր աշխատասիրութեան ոչ
 նպատակը կփոխուի, ոչ լեզուն եւ ոչ ոճը. վասն
 զի *fauroq* անուանածներս ալ՝ գէթ ըստ մեծի մա-
 սին՝ պիտի լինին դարձեալ ընտանեկան ոճով պատ-
 մուած հոգեշահ պատմութիւններ, եւ առանց ճար-
 տասանական զարդարանքներու տրուած խրատ-
 ներ. իսկ յարսսները կմնան նոյնպէս պարզ եւ
 դիւրիմաց ոճով եղած բացատրութիւններ առ հա-
 սարակ ուսումնական, պատմական, աշխարհա-
 գրական, եւ ուրիշ արտաքին օգտակար տեղե-
 կութեանց:

ԳԱՐ. ԵՊ. ԱՅՎԱԶԵԱՆ.

ՀՐԱՏԱՐԱԿԵՆԼ.

Աւագ Երկուշաբբի.
Աւագ Երեքշաբբի.
Աւագ Չորեքշաբբի.
Երուսաղեմի առուամն ու տաճարին կործանումը.
Կոստանդնուպոլսոյ առուամն յՍմանեանց.

ՊԱՏՐԱՍՏՔ Ի ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ.

Ծնունդ եւ Յայտնութիւն Տեառն.
Տեառնընդառաջ.
Բուն Բարեկենդան.
Աւագ Հինգշաբբի.
Աւագ Ուրբաթ.
Զատիկ սուրբ Յարութեան Տեառն.
Համբարձումն.
Հոգեգայտուստ.
Վարդավառ.
Վերափոխումն.
Սուրբ Խաչ.
Սուրբ Հովհիսիմեանք.
Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ.
Որդիք եւ բոռունք սրբոյ Լուսաւորչին.
Մեծն Ներսէս Պարբե.
Սուրբ Սարգիս Զօրավար.
Սուրբ Մինաս.
Սուրբ Անտոն ճգնաւոր.
Յօր երանելի.
Թաղեոս առաքեալ, Ս. Սանդուխտ կոյս, եւ Ս. Շուշանիկ.
Ժամ եւ Ժամերգութիւն.
Երկինք.
Արեւն ու Մոլորակները.
Ջերմութիւն եւ Ջերմաչափ.
Մետեորագիտութիւն, կամ Գուշակութիւնք օդոց.
Մրջինք եւ Մեղուք.
Տնտեսութիւն.
Եգիպտոսի հնութիւնները, եւ այլն :

Գին իւրաքանչիւր տեսակի 20 ֆոխ.

